



Հայաստանի կառավարության ղեկավար Փաշինյանը կորցրել է հենարանը: © deutschlandfunk

29.05.2021

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԻՆՉՊԵՄ ԵՆ ՏԱՊԱԼՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի նախկին երեք նախագահները ցանկանում են վարչապետին հեռացնել պաշտոնից: Այսուամենայնիվ, նրանք չեն կարողանում միմյանց հետ համաձայնության գալ գործողությունների եղանակի շուրջ:

Ամալյա վան Գենթ

Հայաստանի հետխորհրդային Հանրապետության առաջին, երկրորդ և երրորդ նախագահները հավասարապես հայտարարել են հունիսի 20-ին նշանակված արտահերթ խորհրդարանական ընտրություններին իրենց մասնակցության մասին: Թեկնածուների քաղաքական կողմնորոշումն ու խառնվածքը միանգամայն տարբեր են, բայց նրանք բոլորը ձգտում են մեկ նպատակի, այն է՝ խանգարել գործող վարչապետ Նիկոլ Փաշինյանի վերընտրումը:

Մտահոգված հանրապետության գոյության համար

Փաշինյանի կառավարությունը տապալելու «հրատապ անհրաժեշտության» մասին առաջինը խոսեց Լևոն Տեր-Պետրոսյանը: Կառավարության տապալումը «միակ հավանական ճանապարհն է նոր աղետներից խուսափելու համար», - ընդգծեց նա իր մի հայտարարության մեջ: Եվ՝ «Բոլոր հայերի պարտականությունն է գիտակցել, որ Փաշինյանի վարչակարգի շարունակումը շատ ավելի վտանգավոր է Հայաստանի և Արցախի համար (հայերենով՝ Լեռնային Ղարաբաղ), քան նույնիսկ հնարավոր կամ կարծեցյալ սպառնալիքները, որոնք բխում են Ադրբեջանից և Թուրքիայից»:

Լևոն Տեր-Պետրոսյանը, ընդհանուր առմամբ, հայտնի չէ որպես ճոռոմախոս մարդ: Իբրև կրքոտ լեզվաբան՝ իր ամբողջ կյանքի ընթացքում նա զգույշ էր գործածում լեզուն: Երկչոտ գիտնականը լեզվական հետազոտությունների խաղաղ կղզիացումից իր երկրի քաղաքական երկնականամար ինքնանետվեց միայն 1988 թ. Ղարաբաղյան հակամարտության բռնկումից հետո. Լևոն Տեր-Պետրոսյանի շրջապատից մի խումբ հայ մտավորականներ, որոնք 1980-ական թթ. վերջին էլ Գորբաչովի «վերակառուցում» և «հրապարակայնություն» բարեփոխումների ջերմ պաշտպաններ էին, հրաժարվեցին դրանցից և, դեռ Խորհրդային միության պաշտոնական փլուզումից առաջ, Հայաստանը խաղաղությամբ տարան դեպի անկախություն: 1991 թ. սեպտեմբերին Տեր-Պետրոսյանը նշանակվեց հետխորհրդային անկախ հանրապետության առաջին ղեկավար:

Այժմ 76-ամյա քաղաքական գործիչը այս օրերին լրջորեն մտահոգված է «իր» հանրապետության գոյությամբ՝ ոչ առանց պատճառի. 2020 թ. աշնանը Լեռնային Ղարաբաղի պատերազմը Հայաստանի համար արժեցել է շատ բարձր տուրք՝ մարդկային կյանքեր, ու նաև փաստացիորեն խաթարել է նրա պաշտպանությունը: Մինչ հասարակությունը դեռ կաթվածահար վիճակում է, կառավարությունը, թվում է, ի վիճակի չէ քիչ թե շատ լուծելու երկրի ամենահրատապ խնդիրները, ինչպես օրինակ՝ ապահովելու պատերազմի շուրջ 11.000 հաշմանդամների բժշկական օգնությունը կամ մեղմելու փախստականների կարիքը: Եթե Ռուսաստանը և մյուս երկրները կովիդյան փուլից հետո վերաբացեն իրենց սահմանները, նոր զանգվածային արտագաղթի ուրվականը նկատելի կդառնա. դեռ 1991 թ. Ղարաբաղյան առաջին պատերազմի ընթացքում, որն այն ժամանակ, ինչպես անցած աշնանը, սկսել էր Ադրբեյջանը, արտագաղթեց շուրջ 1 միլիոն մարդ, ամենից առաջ՝ գիտնականներն ու երիտասարդները: Երկրի բնակչությունը նվազեց՝ 3.5-ից հասնելով 2.5 միլիոնի: Միգրացիայի նման ալիքը այս անգամ կարող է բառացիորեն ճակատագրական լինել հանրապետության համար:

Այս մտահոգությունները, հավանաբար, ստիպեցին Լևոն Տեր-Պետրոսյանին ցատկել իր ստվերի վրայով և կապ փնտրել պաշտոնում իր իրավահաջորդի՝ Ռոբերտ Քոչարյանի հետ: Հայր՝ ծնունդով Ղարաբաղից, ստոր, ուժ գործադրող քաղաքական գործչի համբավ ուներ, երբ արդեն 1990-ական թթ. կեսերին Ղարաբաղից տեղափոխվեց Հայաստան: Երբ 1998 թ. Տեր-Պետրոսյանն ազդարարեց Ղարաբաղյան հարցում փոխզիջման գնալու իր պատրաստակամությունը, Քոչարյանը փաստական ոչ մի վայրկյան չհապաղեց քաղաքական հարվածով պետության ղեկավարին տապալելու համար:

Քոչարյանը նշանակվեց Հայաստանի երկրորդ ղեկավար, և նրա հետ Երևանում սկսվեց Լեռնային Ղարաբաղի, այսպես կոչված, հզոր տերերի իշխանությունը, որը նույնպես ծագումով դարաբաղցի Սերժ Սարգսյանի հետ պահպանվեց ուղիղ քսան տարի: Արտաքին քաղաքականության առումով այն բնութագրվում էր Ռուսաստանի հետ սերտ ռազմավարական համագործակցությամբ, իսկ տնտեսական առումով՝ քաղաքականության և օլիգարխիայի նույնքան սերտ փոխկապակցվածությամբ: Ղարաբաղյան հարցում դարաբաղցիները մերժեցին ցանկացած փոխզիջում, որը սկզբից նեթ չէր նախատեսում իրենց մինի պետության անկախությունը:

Զնայած հին օրերի բոլոր դառնություններին՝ Լևոն Տեր-Պետրոսյանն այժմ Քոչարյանին և Սարգսյանին առաջարկեց կազմել համատեղ ընտրական դաշինք: Նա նրանց աղաչեց, որ միայն

նման դաշինքը կարող է երաշխավորել Նիկոլ Փաշինյանի ընտրական պարտությունը: Հակառակ դեպքում՝ նոր ընտրություններում վարչապետի հաղթանակը «կշարունակի ներքին անկայունությունը և կարագացնի արտագաղթի տեմպերը»: Տեր-Պետրոսյանի մտահոգությունները կիսում են նրա զրուցակիցները, ինչպես բնակչության մի սովոր հատված կիսում է անկախ հանրապետության գոյության հետ կապված մտահոգությունները: Նախկին երեք նախագահները մեղադրում են վարչապետ Նիկոլ Փաշինյանին այն բանի համար, որ նա իր՝ 2018 թ. «Ռուսաստանից ավելի շատ անկախության» կոչով չափազանց թեթևամտորեն կորցրել է Մոսկվայի բարեհաճությունը: Նրանց տեսակետից՝ Լեռնային Ղարաբաղի պատերազմում Հայաստանի ծանր պարտությունը միայն դրա գինն է:

Տեր-Պետրոսյանի կոչերը հաջողություն չունեցան: Քոչարյանը խստորեն մերժեց համատեղ ընտրական դաշինքի ստեղծումը: Նա, ըստ երևույթին, դեռ հույս ունի, որ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ իր սերտ բարեկամությունն իրեն կօգնի հասնել միանձնյա ընտրական հաղթանակի՝ եթե ոչ հունիսի 20-ին, ապա՝ շուտով: Դիտորդները ենթադրում են, որ այս անգամ ընտրական պայքարն իրականում ծավալվելու է Քոչարյանի ու վարչապետ Նիկոլ Փաշինյանի միջև:

Հեղափոխություն և աղետ

Փաշինյանի՝ օրենքի գերակայությամբ ապագայի, ավելի շատ ժողովրդավարության, ավելի քիչ կոռուպցիայի և Ռուսաստանից ավելի քիչ կախվածության խոստումը 2018 թ. թևավորեցին հայերի երազանքները և առաջ բերեց նոր ուղիներ բաց անող քաղաքական շրջադարձեր, որոնք պատմության մեջ մտան որպես, այսպես կոչված, «Թավշյա հեղափոխություն»:

Փաշինյանը գիտակցում է, որ իր ժողովրդի համար ինքն այլևս ոչ թե հեղափոխության հերոս, այլ ազգային պարտության դեմք է: Պատերազմի բռնկումից 45 օր անց նա ստիպված էր Մոսկվայում կնքել զինադադար, որը հավասարազոր էր նվաստացուցիչ կապիտուլյացիայի: Բայց Նիկոլ Փաշինյանը գիտի նաև, որ իր մրցակիցներից ոչ մեկը, Ռուսաստանից է՛լ ավելի սերտ կախվածության միջոցից բացի, չի տիրապետում արժանահավատ ծրագրի այն մասին, թե ինչպես պետք է լուծվեն երկրի՝ երկյուղ պատճառող խնդիրները: Այժմ, սակայն, նա նույնպես դա է պահանջում: Եվ նա վերջապես գիտակցում է, որ հասարակության մի սովոր հատված խորշում է հին կոռումպացված կառավարիչների և օլիգարխների դարաշրջանից: Հավանաբար դա է պատճառը, որ, ըստ վերջին հարցումների, նա դեռ առաջատար դիրքում է:

Նորարարություն

Այս ընտրություններում նորարարություն կա. սփյուռքից չորս հայ գործարարներ, անվանապես՝ Ռիչարդ Ազարնիան (Ֆրանսիայից), Արթուր Ալավերդյանը (Հայաստանից), Նուբար Աֆեյանը (ԱՄՆ-ից) և Ռուբեն Վարդանյանը (Ռուսաստանից) վերջերս կյանքի են կոչել «Ապագա հայկականը» նախաձեռնությունը («Future Armenian Initiative») և իրենց՝ նեղ դրության մեջ գտնվող ազգին մտածողությունը փոխելու կոչ են անում: «Եկեղեցիների փոխարեն՝ կայազորային պետություն», - այսպես է հնչում նախաձեռնության հայտարարված ցանկությունը:

Նախաձեռնությունը պաշտպանում է հայկական զինված ուժերի վերակազմավորումը և ժամանակակից զենքերով զինելն ամբողջ աշխարհից: Նրանց փաստարկը հետևյալն է՝

ռուսական զենքը, որին տիրապետում է Հայաստանը, դարաբաղյան վերջին պատերազմում չէր կարող ոչինչ անել ժամանակակից անօդաչու սարքերի դեմ: Նրանց երկրորդ պահանջը վերաբերում է կրթության, գիտության և տեխնոլոգիայի խթանմանը: Նրանք նշում են, որ առաջիկա հինգ տարիների ընթացքում միայն դրա միջոցով Հայաստանը կարող է 150.000-200.000 հայերին դրդել վերադառնալու հայրենիք: Նրանց եզրակացությունն է՝ և միայն այս եղանակով կարող է լուծվել երկրի ժողովրդագրական խնդիրը, իսկ իր գոյությամբ սպառնալիքի տակ գտնվող պետությունը՝ փրկվել: Արտաքին քաղաքականության առումով նախաձեռնությունը ցանկանում է տարածաշրջանային, ինչպես նաև գլոբալ տերությունների հետ ռազմավարական գործընկերության ընդլայնում և Ռուսաստանից կախվածության նվազեցում:

Հանրապետության անկախացումից ի վեր առաջին անգամն է, որ սփյուռքահայերը այդքան զանգվածաբար միջամտում են Հարավային Կովկասի իրենց փոքրիկ հանրապետության ներքին գործերին: Նաև առաջին անգամն է, որ սփյուռքը պատրաստակամություն է ցուցաբերում վճարել շատ փող՝ պետության վերակառուցումը հնարավոր դարձնելու համար: Որպես համեմատություն. Հայաստանի բնակչությունն այսօր հաշվվում է շուրջ 2.5 միլիոն: Դրա փոխարեն՝ առնվազն երկու անգամ ավելի շատ գնահատվում է աշխարհով մեկ ցրված սփյուռքը:

Նոր ճգնաժամ Հայաստանի և Ադրբեջանի միջև

Անցած երեքշաբթի Հայաստանի Գեղարքունիքի մարզում հայ զինվոր զոհվեց ադրբեջանական զորքերի գրոհի ժամանակ՝ ասում է Երևանում Հայաստանի կառավարությունը, պատահաբար՝ պնդում է Բաքվում Ադրբեջանի կառավարությունը: Մեկ օր անց Երևանը հայտնեց վեց հայ զինվորների գերեվարման մասին, որոնք նորից ըստ Բաքվի՝ հատել էին իր տարածքի սահմանները՝ ականներ տեղադրելու համար: Արդեն մայիսի 20-ին Հայաստանի Սյունիքի մարզի վրա ադրբեջանական զորքերի գրոհի ժամանակ վիրավորվեցին 11 հայ զինվորներ. Հայաստանի և Ադրբեջանի միջև լարվածությունն ավելի մեծ է, քան նախորդ տարվա Լեռնային Ղարաբաղի պատերազմից հետո:

Այս ճգնաժամում խոսքը նոր ընդհանուր սահմանի մասին է, որն առաջ է եկել Լեռնային Ղարաբաղի պատերազմից հետո: Այն սկսվեց մայիսի 12-ին, երբ ադրբեջանցի շուրջ 250 զինվորներ առաջին անգամ իրենց հսկողության տակ վերցրին Հարավային Հայաստանում գտնվող Սյունիքի մերձակա Սև լճի շրջանում 3.5 կիլոմետր խորության տարածք՝ Հայաստանի տերիտորիայում: Այդ ժամանակվանից հաղորդվում է շատ ավելի ընդարձակ տարածքի միջադեպերի մասին, որն այժմ ձգվում է Հայաստանի հարավային Սյունիքի մարզից մինչև երկրի արևելքում գտնվող Գեղարքունիքի մարզ: «Ադրբեջանը հետևում է հաղթողի տրամաբանությանը: Նա վերցնում է այն, ինչ կարող է վերցնել: Եվ այն ռազմավարական բարձունքներ է գրավել բոլոր երեք շրջաններում՝ Սյունիքում, Գեղարքունիքում և Տավուշում», - գրում էր հայ ռազմական փորձագետ Ռոբերտ Նազարյանը: Յուրաքանչյուր միջադեպի դեպքում կրկնվում են տեսարանները, որոնք ծանոթ են անցած տարվա պատերազմից. երեխաները, կանայք և ծերերը ստիպված են խուճապահար փախչել, նրանց կենսագործունեության համար անհրաժեշտ պայմանները ոչնչացվում են: Բնակչությունն իրեն պաշարված է զգում նաև մայրաքաղաք Երևանում:

Ադրբեջանը չի հերքում իր Բանակի գրոհը: Ինչպես նախագահ Իլհամ Ալիևն է նորից և կրկին բացատրում, այստեղ խոսքը, սակայն, հակամարտության մասին չէ, հայերն իզուր են բողոքում: «Ադրբեջանը վերականգնում է միայն միջազգայնորեն ճանաչված իր սահմանները», - պնդում է նաև Ադրբեջանի Արտաքին գործերի նախարարության (ԱԳՆ) խոսնակ Լեյլա Աբդուլլահանը՝ լավ իմանալով, որ խոսքն առնվազն «կես ստի» մասին է: Խորհրդային միության փլուզումից ի վեր մասնավորապես այս տարածքի համար ո՛չ բոլոր շահագրգիռ կողմերի կողմից ընդունված սահմանագիծ, ո՛չ բոլորի կողմից ընդունված աշխարհագրական քարտեզներ չկան: Խորհրդային միության օրոք ոչ ոք երբևէ չէր զբաղվել դրանցով:

Սեփական հայեցողությամբ սահմանային տարածքներ յուրացնելը միջազգային դիվանագիտության մեջ, սակայն, հավասարազոր է սահմանների խախտմանը: Ներխուժման մասին խոսեց Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը: Նա Ադրբեջանին կոչ արեց գործերն առանց պայմանի դուրս բերել Հայաստանից: Ուրբաթ ԱՄՆ-ը Հայաստանի և Ադրբեջանի միջև միջազգային սահմանի դեմարկացիայի չենթարկված տարածքների երկայնքով ռազմական տեղաշարժերը որակեց որպես «սադրիչ և անօգուտ»: Վաշինգտոնը Բաքվին կոչ արեց անհապաղ ազատ արձակել բոլոր ռազմագերիներին ու մյուս ձերբակալվածներին և գործերը ետ քաշել դիրքեր, որոնք նա զբաղեցնում էր անցած տարվա նոյեմբերի հրադադարի ժամանակ: Վերջապես, բոլոր ռազմագերիների և ձերբակալվածների անհապաղ ազատ արձակումը պահանջեցին նաև Մինսկի խմբի համանախագահները, որոնց ԵԱՀԿ-ի կողմից հանձնարարվել է խաղաղ լուծում տալ Ղարաբաղյան հակամարտությանը: Նրանք նաև անընդունելի համարեցին սահմանային վեճերը լուծելու համար ուժի գործադրումը կամ սպառնալիքը:

Թե արդյոք և ինչպես կարելի է դրդել Ադրբեջանին իր գործերը դուրս բերելու Հայաստանի տարածքից, առայժմ հնարավոր չէ կանխատեսել: Դրա փոխարեն՝ Մոսկվայի երկար լռությունն արդեն երկար ժամանակ սրտեր է հուզում Հայաստանում. արդեն մայիսի 14-ին Հայաստանը ռազմական օգնության առաջարկով դիմեց Ռուսաստանի առաջնորդությամբ դաշինքին՝ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը (ՀԱՊԿ), որը, ինչպես ՆԱՏՕ-ն, պարտավոր է իր անդամներին պաշտպանել ռազմական հարձակումներից: Մոսկվան, սակայն, մինչ այժմ վերապահ դիրք է բռնել և երբեք չի դատապարտել ադրբեջանական գործերի գրոհները հայկական տարածքներում: Ռուսաստանի արտգործնախարար Լավրովը առաջարկել է միայն միջնորդ լինել սահմանի դեմարկացիայի հարցում: Լեռնային Ղարաբաղի պատերազմից հետո Մոսկվայի կողմից երկրորդ անգամ անպաշտպան թողնվելու համոզվածությունը ծանր է կշռում: Հարցումը ցույց տվեց, որ հայերի միայն մեկ երրորդն է այն կարծիքին, որ դժվար իրավիճակներում իրենց երկիրը կարող է հույսը դնել Ռուսաստանի վրա: Հայերի համամասնությունը, որոնք Ռուսաստանը համարում են իրենց ամենակարևոր աշխարհառազմավարական գործընկերը, անցած տարվա սեպտեմբերին կազմում էր գրեթե 70 %:

Աղբյուր՝ <https://www.infosperber.ch/politik/wahlen-in-armenien-wie-stuerzt-man-eine-regierung/>